

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲՍՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

15 նոյեմբերի 2004 թվականի N 60
28 հուլիսի 2011 թվականի N 168
13 հունիսի 2012 թվականի N125

26 ապրիլի 2004 թվականի N 9
ք. Ստեփանակերտ

**ՄՐՅՈՒՅԹ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԹԵՍՏԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

Սահմանել մրցույթ և ատեստավորում անցկացնելու համար թեկտեր կազմելու կարգը (հավելված):

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Բ.Ս. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՄՐՑՈՒՅԹ ԵՎ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵՍՏԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ

1. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթ ու քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնելու համար թեստերը կազմվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ Օրենք) և սույն կարգին համապատասխան:

2. Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի բնագավառներին վերաբերող հարցաշարերը կազմում է քաղաքացիական ծառայության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակազմը, իսկ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի «գ» ենթակետի բնագավառին վերաբերող հարցաշարը՝ համապատասխան մարմինների աշխատակազմերը: Յուրաքանչյուր մրցույթ կամ ատեստավորում անցկացնելուց առնվազն երկու ամիս առաջ հարցաշարերը ներկայացվում են Խորհուրդ:

3. Հարցաշարերը, ըստ բնագավառների, բաղկացած են հարցերից (խնդիրներից): Հարցերը վերաբերում են համապատասխան բնագավառների վերաբերյալ կոնկրետ հարցադրումներին, իսկ խնդիրները՝ կոնկրետ իրավիճակների նկարագրությանը:

3¹. Քաղաքացիական ծառայության յուրաքանչյուր պաշտոնի համար սույն կարգի 2-րդ կետով նախատեսված յուրաքանչյուր բնագավառի հարցաշարում ընդգրկված հարցերի (խնդիրների) քանակը պետք է պակաս չլինի թեստային առաջադրանքում տվյալ բնագավառի համար նախատեսված հարցերի քանակի նապատիկից:

4. Հարցերը (խնդիրները) կողմորվում, համարակալվում են՝ ըստ բնագավառների և ըստ պաշտոնների խմբերի: Խորհրդի կամ համապատասխան մարմնի աշխատակազմը հարցաշարերը գնտեղում է համակարգչում:

5. Մրցույթ անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ հարցաշարերն իրենց պատասխաններով հրապարակվում են՝ քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոնների համար Խորհրդի, իսկ քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների համար՝ համապատասխան մարմնի կողմից:

Ատեստավորում անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ հարցաշարերն իրենց ճիշտ պատասխաններով հրապարակվում են համապատասխան մարմնի կողմից:

6. Համակարգչում առանձին գնտեղվում են նաև կողմորված և համարակալված հարցերի (խնդիրների) երեք կամ չորս ենթադրյալ պատասխան, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է:

7. Թեստերը կազմվում են համակարգչային ծրագրի միջոցով համակարգչում նախօրոք գնտեղված հարցաշարերի կողմորված հարցերից (խնդիրներից)՝ պատահական

ընտրությամբ: Համակարգչային ծրագիրը, ընտրելով հարցը (խնդիրը), միաժամանակ դուրս է բերում վերջինիս ենթադրյալ պատասխանները և միասնականացնում:

8. Թեստերը կազմում են՝

- քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի անցկացման և այդ պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման համար՝ Խորհրդի ստեղծած մրցութային կամ ատեստավորման հանձնաժողովները.

- քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի անցկացման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման համար՝ համապատասխան մարմնի ստեղծած մրցութային կամ ատեստավորման հանձնաժողովները:

9. Մրցութային կամ ատեստավորման հանձնաժողովները թեստերը կազմում են մինչև թեստավորման փուլը սկսելը:

10. Յուրաքանչյուր մրցույթի դեպքում մասնակիցների համար կազմվում է մեկ ընդհանուր թեստ՝ սույն կարգին և թափուր պաշտոնի անձնագրով նախատեսված պահանջներին համապատասխան:

11. Թեստավորման առաջադրանքները մասնակցին կամ քաղաքացիական ծառայողին կարող են առաջարկվել գրավոր կամ համակարգչի միջոցով:
